ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 7

25.12.2025Թ. ԿՆՔՎԱԾ N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-5» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Չարենցավան «26» 01 2026թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շահգալդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ 1»), մի կողմից, և «ՄԻԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 25.12.2025թ. կնքված N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-5» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.1.1-րդ, 8.5-րդ, 8.15-րդ կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 Սույն համաձայնագրով նախատեսված «Գնորդ 1»-ի իրավունքներն ու պարտականությունները գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապահվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղի մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ «Գնորդ 2»):

1.2 Հաստատել գնման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 1-ը կցվում է):

1.3 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը (վճարման ժամանակացույց)՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 2-ը կցվում է):

1.4 Ապրանքը համաձայնագրով սահմանված ժամկետում «Վաճառող»-ի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 (երկու) օրից ավելի:

1.5 «Վաճառող»-ի կողմից համաձայնագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել «Գնորդ 2»-ի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 (երկու) օրից ավելի:

1.6 Համաձայնագրի գինը կազմում է 214695.7 (երկու հարյուր տասնչորս հազար վեց հարյուր իննսունհինգ դրամ յոթանասուն լումա) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն:

Համաձայնագրի գինը ներառում է համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով «Վաճառող»-ի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և «Վաճառող»-ն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ «Գնորդ 2»-ը նվազեցնելու այդ գինը:

1.7 «Գնորդ 2»-ն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները «Վաճառող»-ի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

1.8 Մատակարարված ապրանքն ընդունվում է «Գնորդ 2»-ի և «Վաճառող»-ի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը «Գնորդ 2»-ին հանձնելու փաստը ֆիքսվում է «Գնորդ 2»-ի և «Վաճառող»-ի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև համաձայնագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ «Վաճառող»-ը «Գնորդ 2»-ին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը «Գնորդ 2»-ին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված 3):

1.9 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է համաձայնագրի պայմաններին: Հակառակ դեպքում համաձայնագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և «Գնորդ 2»-ը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար համաձայնագրով նախատեսված միջոցները.

բ) «Վաճառող»-ի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

1.10 «Գնորդ 2»-ը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում «Վաճառող»-ին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

1.11 Եթե համաձայնագրի 1.10 կետով սահմանված ժամկետում «Գնորդ 2»-ը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և համաձայնագրի 1.10 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը «Գնորդ 2»-ը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածները կազմված են 4 (չորս) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ԳՆՈՐԴ 1»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝ Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԳՆՈՐԴ 2»
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղի մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ
գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3
«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 16028401101400
ՀՎՀՀ 02807295

Տնօրեն՝ Ա. Հովսեփյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»
«ՄԻԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Երևան, Խորենացի 60/1
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570098160650100
ՀՎՀՀ 04244144
էլ. հասցեն hsargsyan.87@mail.ru
հեռ. (+37499) 75-77-00

Տնօրեն՝ Ա. Գրիգորյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 1
25.12.2025թ. կնքված «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-5» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«26» 01 2026թ. կնքված թիվ 7 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
							հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
59	15111110/501	Տավարի միս, ոսկրոտ	կգ	2518.51	176295.7	70	գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3	70	2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ
60	15131631/501	Տավարի մսի պահածո	կգ	1920	38400	20	գ. Արզական Բաբաջանյան փողոց թիվ 3	20	2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ

«ԳՆՈՐԴ 1»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԳՆՈՐԴ 2»
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղի մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ
գ. Արզական
Բաբաջանյան փողոց թիվ 3
«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 16028401101400
ՀՎՀՀ 02807295

Տնօրեն՝ Ա. Հովսեփյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»
«ՄԻԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Երևան, Խորենացի 60/1
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570098160650100
ՀՎՀՀ 04244144
էլ. հասցեն hsargsyan.87@mail.ru
հեռ. (+37499) 75-77-00

Տնօրեն՝ Ա. Գրիգորյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 2
25.12.2025թ. կնքված «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-5» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«26» 01 2026թ. կնքված թիվ 7 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
59	15111110/501	Տավարի միս, ոսկրոտ	176295.7	176295.7	176295.7	176295.7	176295.7	176295.7	176295.7	176295.7	176295.7	176295.7	176295.7	176295.7	176295.7
60	15131631/501	Տավարի մսի պահածո	38400	38400	38400	38400	38400	38400	38400	38400	38400	38400	38400	38400	38400

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի մատակարարված խմբաքանակների:

«ԳՆՈՐԴ 1»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

____
(ստորագրությունը)
Կ.Տ

«ԳՆՈՐԴ 2»
ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղի մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ
գ. Արզական
Բաբաջանյան փողոց թիվ 3
«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 16028401101400
ՀՎՀՀ 02807295

Տնօրեն՝ Ա. Հովսեփյան

____
(ստորագրությունը)
Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»
«ՄԻԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Երևան, Խորենացի 60/1
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570098160650100
ՀՎՀՀ 04244144
էլ. հասցեն hsargsyan.87@mail.ru
հեռ. (+37499) 75-77-00

Տնօրեն՝ Ա. Գրիգորյան

____
(ստորագրությունը)
Կ.Տ